

4,1 միլիոն դոլար է հանգանակվել ՔՈԱՖ-ի գալա երեկոյին

Նյու Յորք, 21. 12. 2018 թ. - Նյու Յորքի սրտում հայկական դրոշն էր ծածանվում, իսկ 400-ից ավելի հյուրեր շտապում էին Չիպրիանի սրահ՝ մասնակցելու «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (ՔՈԱՖ) 15-րդ գալա երեկոյին: Բարեգործական ընթրիքի նպատակն էր դրամահավաք իրականացնել կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական նորարարական ծրագրերի համար, որոնք իրականացվում են Հայաստանի գյուղական համայնքներում:

2018 թվականի Գալա երեկոյին հանգանակվեց **4,1 միլիոն ԱՄՆ դոլար**: Այն ծառայելու է ՔՈԱՖ ՍՄԱՐԹ ավանի համալրմանը և հասանելի է լինելու Լոռու մարզի շուրջ 150 հազար բնակչին:

*«Տպավորիչ երեկո էր, ու մենք անսահման ոգևորված ենք Սփյուռքի ու մեր գլոբալ ընտանիքի աջակցությամբ, մարդկանց, ովքեր 15 տարի շարունակ խորապես հավատացել ու նվիրաբերել են ՔՈԱՖ-ի առաքելությանը,- ասաց ՔՈԱՖ-ի հիմնադիր և գործադիր տնօրեն դոկտոր **Կարո Արմենը**:- Դա մեզ թույլ է տալիս ընդլայնել մեր գործունեությունը՝ ծառայելով արդեն 100 համայնքների 150,000 բնակչի: Ավելին, այս ապրիլին տեղի ունեցած խաղաղ հեղափոխությունն առավել ցայտուն է ընդգծում ՔՈԱՖ-ի հիմնարար արժեքները՝ ժողովրդավարություն և ազատություն սերմանելով, որ քաղաքացին ինքը սահմանի իր ապագան»:*

Երեկոյի նշանակալի մի մասը կենդանի աճուրդն էր՝ գալա-երեկոյի պատվավոր նախագահ, հռչակավոր արվեստագետ **Թոնի Շաֆրագիի** գլխավորությամբ:

Երեկոն այս տարի ևս վարում էր ՔՈԱՖ-ի դեսպան, ճանաչված դերասանուհի, էմմի և Թոնի մրցանակների դափնեկիր **Անդրեա Մարտինը**: ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի արվեստի սրահը հենց նրա անունն է կրում:

Հռչակավոր հյուրերից էր էմմի մրցանակի հավակնորդ **Վիկտոր Գարբերը**: Նա ՔՈԱՖ-ի մրցանակակիր է, մի քանի անգամ մասնակցել է Հիմնադրամի գալա դրամահավաք-երեկոյների, և հենց նա էր, որ պատիվ ունեցավ հարգանքի տուրք մատուցելու ֆրանսահայ աշխարհահռչակ շանսոնյե **Շառլ Ազնավուրին**:

ՔՈԱՖ-ի մարդասիրական մրցանակ շնորհվեց «Կարնեգի» հիմնադրամի նախագահ **Կարդան Գրեգորյանին** և նրա լուսահոգի տիկնոջը՝ **Քլեր Գրեգորյանին**, ով ՔՈԱՖ-ի հիմնադիր խորհրդի կազմում էր: Հայաստանի բուհերի 9 ուսանողներ ՔՈԱՖ-ի կողմից արժանացել էին Քլեր Գրեգորյանի անվանական կրթաթոշակի:

Գալա երեկոյի մասնակիցները ունկնդրեցին Արմավիրի մարզի Հացիկ գյուղի ուսանողուհի Մարինա Միրզոյանի ներշնչող ելույթը: Մարինան ներկայումս փոխանակման ծրագրով ԱՄՆ-ի Կոլորադո նահանգում է. անգլերենի գիտելիքներ է ձեռք բերել ՔՈԱՖ-ի ծրագրերի շնորհիվ, որ իրականացվել է հենց իրենց դպրոցում: Նրա խոսքը վերաբերում էր ինքնավստահությանը, ձախողման վախերը հաղթահարելուն և իր կյանքում ՔՈԱՖ-ի ազդեցությանը:

Գալա-երեկոյի մշակութային հատվածում հանդես եկան Հայաստանից մեկնած դաշնակահար Արմեն Պուչինյանը և սաքսոֆոնահար Արմեն Դադենցը, ովքեր կատարեցին դասական և հանրաճանաչ գործեր:

* * *

[Հայաստանի մանուկներ հիմնադրամը \(COAF\)](#) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 44 համայնքների քավելի քան 75,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ COAF-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ [ՍՄԱՐԹ նախաձեռնություն](#): ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովելու գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՍՄԱՐԹ-ը կդառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին: